ეროვნული სასწავლო ოლიმპიადა
გეოგრაფია
(სომხურ ენაზე)
II ტური
2025-2026 წწ.

➢ *Հարց ընտրովի պատասխաններով - առաջադրանք № 1-5*

Հրահանգ
Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրած պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա, հետևյալ կերպ՝ պատասխանի համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծումներ և այլն, չեն ընկալվում էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք, հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1 մ.) 1. Ո՞րն է լուսանկարում պատկերված Արիզոնայի խառնարանի ծագման պատճառը:

ա) Հրաբխի ժայթքումը,
բ) օգտակար հանածոների արդյունահանումը,
գ) երկրաշարժի ժամանակ հողի փլուզումը,
դ) երկնաքարի անկումը:

(1 մ.) 2. Վրաստանում որտե՞ղ է սկսվել ցիտրուսների զանգվածային կուլտիվացումը 1920-30-ական թվականներին:

ա) Իորայի սարահարթում,
բ) Կոլխեթիի հարթավայրում,
գ) Ռաճայի գոգահովտում,
դ) Ալազանիի հովտում:

(1 մ.) 3. Աֆրիկայի ուրվագծային քարտեզի վրա նշված սահմանի հատվածներից ո՞րն է «երկրաչափական սահմանի» օրինակը:



ա) A
բ) B
գ) C
դ) D

(1 մ.) 4. Ինչպե՞ս է Պրոմեթևսի քարանձավի հաստատուն +14°C ջերմաստիճանն անդրադառնում նրա բնական գործընթացների վրա:

ա) Նպաստում է կրաքարային կազմավորումների պահպանմանը,
բ) առաջացնում է ապարների ճաքեր և երկրաշարժեր,
գ) նվազեցնում է թթվածնի քանակը և օդի թափանցիկությունը քարանձավում,
դ) մեծացնում է կրաքարի քայքայման գործընթացը մեխանիկական ճանապարհով:

(1 մ.) 5. Ստորև ներկայացված լուսանկարներից երեքն արվել են Վրաստանում: Ո՞ր լուսանկարը ***չի արվել*** Վրաստանում:



- ***Համապատասխանության որոշում - առաջադրանք № 6-8***

Հրահանգ

Որոշեք համապատասխանությունն առաջադրանքում տրված երկու թվարկացանկի միջև: Պատասխանը գրեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում՝ յուրաքանչյուր տառի տակ գրելով համապատասխան թվանշանը: Միավորների քանակը սահմանվում է ըստ կոնկրետ առաջադրանքի:

(8 մ.) 6. Որոշե՛ք համապատասխանությունը (հաշվի՛ առեք, որ պատասխանը ***հնարավոր չէ*** կրկնել).

	Լուսանկար		Տարածման արեալի քարտեզ
ա	 Պինգվին	1	

Ծ	 Կոալա	2	
Ծ	 Ջեյրան	3	
Ք	 Դինգո	4	
Ֆ	 Պանդա	5	

3	 Կոկորդիլոս	6	
ზ	 Puma	7	
თ	 Կազուար	8	

ა	ბ	გ	დ	ე	ვ	ზ	თ

(6 մ.) 7. Որոշե՛ք համապատասխանությունը (հաշվի՛ առեք, որ պատասխանը *հնարավոր չէ* կրկնել).

	Ճանապարհորդ		Տեղեկություններ անձի մասին
ա	Իբն Բատուտա	1	Մին դինաստիայի ականավոր ճանապարհորդ, նավաստի և դիվանագետ, որը գլխավորել է յոթ խոշոր մասշտաբային ռազմա-առևտրային ծովարշավները Հնդկաչինի, Հնդուստանի, Արաբական թերակղզու և Հարավային Աֆրիկայի ափերին:
բ	Ֆրեյա Սթարք	2	Աշխարհագրական մեծ հայտնագործությունների դարաշրջանի ականավոր ներկայացուցիչ: Նա առաջին եվրոպացին էր, ով Ատլանտյան օվկիանոսով ճանապարհորդեց դեպի Խաղաղ օվկիանոս:
գ	 Ջեյմս Կուկ	3	XIV դարում ճանապարհորդեց Աֆրիկայի և Ասիայի երկրներ, 30 տարվա ընթացքում անցնելով մոտ 120 000 կիլոմետր ներկայացրեց բազմաթիվ մշակույթների նկարագրություններ և սկզբնական հաշվառման փաստաթղթեր:
դ	Մարկո Պոլո	4	Հեղափոխություն իրականացրեց ծովային հետազոտությունների մեջ, ղեկավարել է երեք շուրջերկրյա ծովարշավ: Մահացել է Հավայան կղզիներում՝ տեղի բնակչության հետ հակամարտության ժամանակ:

Ը	 Չժենգ Հե	5	Ասիայում նրա երկարամյա ճանապարհորդությունը և այդ ճանապարհորդության արդյունքում գրված գիրքը զգալի ազդեցություն են ունեցել Աշխարհագրական մեծ հայտնագործությունների դարաշրջանի ծովագնացների, մասնավորապես՝ Քրիստափոր Կոլումբոսի վրա:
Յ	 Ֆեռնան Մագելան	6	Այս ճանապարհորդն ու գրողը կոտրեց գենդերային և մշակութային պատնեշները: Նրա հետազոտությունները հատկապես գնահատվում են մանրակրկիտ և մարդասիրական դիտարկումների համար: Նա ապրեց մինչև խոր ծերություն և մահացավ 100 տարեկան հասակում:

Ա	Ծ	Գ	Դ	Ը	Յ

(8 մ.) 8. Որոշե՛ք համապատասխանությունը (հաշվի՛ առեք, որ պատասխանը *հնարավոր չէ* կրկնել).

	Ազիմուտը ք. Քութայիսիից		Բնակավայր
Ա	3^0	1	Փոթի
Ծ	162^0	2	Ամբրոլաուրի
Գ	303^0	3	Բաթումի
Դ	54^0	4	Մեստիա
Ը	262^0	5	Գորի
Յ	106^0	6	Սոխումի
Ֆ	234^0	7	Ախալցիխե
Թ	$180°$	8	Ադիգենի

Ա	Ծ	Գ	Դ	Ը	Յ	Ֆ	Թ

➢ *Տեղեկատվության վերլուծություն - առաջադրանք № 9-11*

Հրահանգ
Վերլուծեք առաջադրանքում տրված տեղեկությունը և պատասխանեք հարցերին: Պատասխանը գրեք պատասխանների թերթիկում հատկացված համապատասխան տեղում: Միավորների քանակը սահմանվում է ըստ կոնկրետ առաջադրանքի:

(4 մ.) 9. Վերլուծե՛ք նկարը և պատասխանե՛ք հարցերին.

(1 մ.) 9.1. Ո՞ր օգտակար հանածոյի փոխադրումն է պատկերված լուսանկարում:

ա) Նավթի,
բ) կրաքարի,
գ) քարածխի,
դ) գիպսի:

(3 մ.) 9.2. Անվտանգության նկատառումներից ելնելով, ի՞նչ է անհրաժեշտ անել լուսանկարում պատկերված օգտակար հանածոն համապատասխան մեթոդով տեղափոխելիս (անվանեք այն կոնկրետ միջոցը, որը պատկերված է լուսանկարում) և նշեք երկու պատճառ, թե ինչու է անհրաժեշտ կիրառել այդ միջոցը:

(4 մ.) 10. Ավստրիական Ալպերի նախալեռներում գտնվում է չորացող (ժամանակավոր) կանաչ լիճը (Grüner See), որտեղ ջուրը կուտակվում է ընդամենը մի քանի շաբաթով, հիմնականում մայիս-հունիս ամիսներին: Անվանե՛ք և բացատրե՛ք, թե որ գեոմորֆոլոգիական և կլիմայական գործոններն են դրա պատճառը:

Grüner See-ի կլիմայական դիագրամ (միջին ջերմաստիճան և տեղումներ)



(5 մ.) **11. Վերլուծե՛ք տեքստը և պատասխանե՛ք հարցերին.**

Արգենտինան աշխարհի ամենամեծ երկրներից մեկն է: Այն գտնվում է հարավային կիսագնդում և տարածվում է Հարավային արևադարձից մինչև Պատագոնիայի սառցադաշտային լանդշաֆտները: Արգենտինան հայտնի է իր բազմազան աշխարհագրությամբ. արևմուտքում՝ Անդյան լեռները, կենտրոնում՝ բերրի Պամպան, իսկ հարավում՝ Պատագոնիայի ընդարձակ հարթավայրերը:

Երկիրն առանձնանում է մշակութային ինքնությամբ, որը հիմնված է եվրոպական և տեղի ազդեցությունների վրա: Մայրաքաղաք Բուենոս Այրեսը հաճախ անվանում են «Հարավային Ամերիկայի Փարիզ»՝ իր ճարտարապետության և մշակութային կյանքի պատճառով: Արգենտինան տանգոյի ծննդավայրն է և հայտնի է նաև իր բարձրորակ տավարի մսով, ֆուտբոլի կրքոտ երկրպագուներով և այնպիսի բնական հրաշքներով, ինչպիսիք են Իգուասու ջրվեժը և Պերիտո Մորենո սառցադաշտը:

Երկրի տնտեսությունը հիմնված է գյուղատնտեսության, հանքարդյունահանման և արդյունաբերության վրա, սակայն գնաճն ու արտաքին պարտքը շարունակում են մարտահրավեր մնալ երկրի համար:



(1 մ.) **11.1.** Ըստ մակերեսի մեծության Հարավային Ամերիկայում ո՞ր տեղն է զբաղեցնում Արգենտինան:

(1 մ.) **11.2.** Ինչպե՞ս է կոչվում Ասիայի և Եվրոպայի մայրցամաքներում գտնվող Պամպաներին համապատասխանող բնական զոնան:

(2 մ.) **11.3.** Ո՞ր երկու ազգությունների եվրոպացի էմիգրանտներն են առանձնահատուկ ազդեցություն թողել տեղական մշակույթի վրա:

(1 մ.) **11.4.** Հաշվեք, թե ինչի է հավասար Արգենտինայի առևտրի սալդոյի ցուցանիշը: